ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Էկոնոմիկա և քաղաքականություն *(հարաբերակցությունը սոցիալիզմի կատարելագործման պայմաններում)*, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1988, 276 էջ։

Էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության ուսումնասիրությունը փիլիսոփայության և սոցիոլոգիայի կարևորագույն հարցերից է։ Այն ունի ոչ միայն տեսական, այլև գործնական-քաղաքական հրատապ նշանակություն։ Ընդ որում, սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը հիմք, նախապայման է տնտեսական և քաղաքական նոր պայմաններում մարդու գործունեության կազմակերպման ու իրականացման համար։ Ուստի մենագրության հեղինակը միանգամայն իրավացիորեն իր ուսումնասիրությունը սկսում է դասականներով։ Չէ՞ որ իսկապես էկոնոմիկայի և քաղաքականության կապի ու փոխհարաբերության վերլուծությունը անկյունաքարի նշանակություն ունի մարքս-լենինյան փիլիսոփայության շրջանակներում։ Այսպես՝ Շ. Մարտիրոսյանը սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա հետամուտ է լինում էկոնոմիկայի և քաղաքականության, որպես հասարակական սիստեմների դիալեկտիկական կապի, երկու հիմնական դրույթներին. այն է՝ էկոնոմիկան որոշում է քաղաքականությունը և քաղաքականությունը առաջնություն ունի էկոնոմիկայի նկատմամբ։ Սա նշանակում է՝ մենագրության հեղինակը հստակ տարբերակում է որոշիչի և առաջնության վերաբերյալ փիլիսոփայական հարցադրումը։ Ընդ որում, այդ հարցադրման առաջին մասը վերաբերում է ըստ խնդրի իմացաբանական կողմին, իսկ երկրորդը՝ սոցիալ-պատմական պրակտիկային։ Հիմնական եզրակացությունն այն է, որ նշված դրույթները ոչ թե հակասում, այլ փոխադարձաբար լրացնում են միմյանց, և որ քաղաքականության առաջնության լենինյան դրույթը էկոնոմիկայի որոշիչ դերի վերաբերյալ մարքսյան դրույթի շարունակությունն է, զարգացումը և ավարտը։ Այս կապակցությամբ մենագրության մեջ հետևողականորեն վերլուծվում են նաև գիտական մամուլում եղած առամել կարևոր ու հետաքրքրություն ներկայացնող հեղինակային տարբեր պատկերացումները։

Գրականության մեջ էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության մարքս-լենինյան ըմբռնումների կամ բանաձևերի կապի հարցի լուծումը տրվում է մի շարք փոխկապակցված թեզերի (երեք, չորս, անգամ հինգ) առաջադրմամբ, որոնք քննվում են որպես տվյալ ըմբռնումները ներդաշնակորեն միավորող տրամաբանական անհրաժեշտ օղակներ (Ա. Կ. Բելիխ, Կ. Ի. Զարոդով, Ֆ. Մ. Բուրլացկի և այլք)։ Մինչդեռ խնդիրը այլ է. ոչ թե պետք է փնտրել մի շարք տրամաբանական, կարելի է ասել, արտաքին կապեր էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության դիտական պատկերացման համար, այլ ուղղակիորեն ելնել այդ հարաբերակցության դիալեկտիկական բնույթից։ Այսինքն՝ այն իրողությունից, որ քաղաքականությունը որոշվելով էկոնոմիկայով, որպես վերջինիս հետագա զարգացման անհրաժեշտ պայման, բնականորեն կոչված է նրանից առաջ անցնելու, նախանշելով էկոնոմիկայի զարգացման գլխավոր ուղղությունները և հիմնական խնդիրները, առանց որոնց սահմանման չի կարող իրականացվել գիտակցված ու հեռանկարային սոցիալական առաջադիմությունը։ Հարկ է նշել, որ տվյալ ուսումնասիրության մեջ, փիլիսոփայական լեզվով ասած, սոցիալական զարգացումը դիտվում է որպես նպատակ, տնտեսականը միջոց, իսկ քաղաքականը՝ այդ նպատակին հասնելու գլխավոր կազմակերպիչ ուժ։

Եվ իրոք, էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության ուսումնասիրությունը, եթե տարվում է դոգմատիզմի շրջանակներից դուրս, չի կարող սահմանափակվել միայն վերացական փիլիսոփայական հարցադրումների առաջադրմամբ։ Այստեղ առանձնապես կարևոր են սոցիոլոգիական խնդիրները, որոնք առաջին պլան են մղվում, երբ վերլուծում ենք սոցիալ-պատմական կոնկրետ պայմաններն ու հարցերը։ Ուստի հեղինակը անդրադառնում է էկոնոմիկայի և քաղաքականության փոխհարաբերության այնպիսի հարցերի, ինչպիսիք են դրանց ամբողջականությունը, խախտման հիմքերն ու էական հետևանքները։ Այս ամենը Շ. Մարտիրոսյանին հնարավորություն է տալիս վերջին քառորդ դարի պատմական ֆոնի վրա գնահատելու կուսակցության վերջին համագումարի սկզբունքային դիրքորոշումները՝ որպես էական լուրջ քայլ դեպի էկոնոմիկայի և քաղաքականության միասնության..ամրա-

այնդեսը՝ ի հակադրություն բաղաքական վոլյունտարիզմի և տնտեսական օբյեկտիվիզմի։ Այս առնչությամբ հեղինակը բազմակողմանիորեն վերլուծում ու օբյեկտիվորեն գնահատում է համապատասխան դրությունները, էկոնոմիկայի ու քաղաքականության համապատասխան ֆունկցիոնները, մատնանշում սոցիալական զարգացման այն գլխավոր ոլորտները, որտեղ կարելի է տեսական սկզբունքային դիրքերից լուսաբանել էկոնոմիկայի և քաղաքականության դիալեկտիկան։ Հարկ է անպայման մատնանշել հեղինակի ձգտումը՝ խորամուխ լինելու նաև բուն տնտեսագիտական խնդիրների մեջ, որոնք սակայն ուղղակիորեն ներազդում են հասարակության սոցիալական առաջընթացի ապահովման խնդրին։ Այս առումով առավել հատկանշականը էկոնոմիկայի զարգացման էքստենսիվ և ինտենսիվ եղանակներին նվիրված բաժինն է, որը հաստատում է Շ. Մարտիրոսյանի հակումը չշրջանցելու այն էական և ոչ միանշանակ հարցերը, որոնք անմիջական առնչություն ունեն ուսումնասիրության առարկային։ Այսինքն՝ հեղինակն իր ուսումնասիրության տեսական ըմբռնումները մշտապես հարակցում է հասարակության սոցիալական խնդիրների լուսաբանման հետ։ Չէ որ մենագրության մեջ ընդգծվում է էկոնոմիկայի, քաղաքականության ու սոցիալական զարգացման ներքին կապը, որտեղ առաջին երկուսը դիտվում են որպես վերջինիս ապահովման հիմնական նախապայմաններ։ Այստեղից էլ՝ աշխատության մեջ այն զգալի տեղը, որ հատկացված է առաջնահերթ սոցիալական պրոբլեմների ուսումնասիրությանը։ Խոսքը սոցիալիստական հասարակության ազգային հարաբերությունների, խորհրդային ապրելակերպի ու դեմոկրատիայի կատարելագործման մասին է։ Այս բնագավառներից յուրաքանչյուրում հեղինակը հետամուտ է լինում տնտեսական, քաղաքական և մարդկային գործոնների դերին, նրանց փոխադարձ կապին։ Ընդ որում նշված բնագավառներից առաջին երկուսը քննվում են որպես սոցիալական առաջընթացի նպատակային ուղղություններ, իսկ դեմոկրատիան՝ որպես գլխավոր լծակ, երաշխիք այդ ուղղություններն ապահովելու համար։ Բնորոշ է նաև այն, որ յուրաքանչյուր դեպքում խնդիր է դրվում նշված հարաբերակցությունը տեսնել պատմական անցյալում և մեր ժամանակաշրջանում։ Այսպես՝ ազգային հարաբերությունների բնագավառում էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ ընդհանրացումը։ Պատմական անցյալում խորհրդային հասարակության ազգային կառուցվածքի հարցում էկոնոմիկայի նկատմամբ քաղաքականության առաջնությունը դրսևորվում է արդյունաբերական կենտրոնի համեմատ միութենական հանրապետությունների տնտեսական առավել արագ աճի ապահովմամբ, ընդ որում համապետական ինտեգրացման ուղղությամբ։ Իսկ այժմ պատկերը հետևյալն է. քաղաքականությունը խստիվ և հետևողականորեն հոգում է, որ միութենական հանրապետությունների էկոնոմիկան զարգանա մի միասնական ժողովրդատնտեսական համալիրի շրջանակներում և որ ստեղծված պոտենցիալն առաջին հերթին առավելագույն չափով օգտագործվի համապետական նպատակների համար։ Էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության գործնական դրսևորման հիմնական կանխորոշիչ նպատակը թե՛ պատմական անցյալում և թե՛ սոցիալիզմի կատարելագործման արդի պայմաններում նույնն է՝ դա մի միասնական միութենական բազմազգ պետության ըստ ամենայնի ամրապնդումն ու զարգացումն է։ Անդրադառնալով սոցիալիստական բազմազգ պետության կազմավորման տեսական ու գործնական հարցերին, մենագրության հեղինակը հետևողականությամբ քննում է Վ. Ի. Լենինի աշխատությունները, վերհանելով ազգային քաղաքականության այն գլխավոր սկզբունքները, որոնք ընկած են Խորհրդային Միության կազմավորման հիմքում։ Խոսքը առաջին հերթին ազգերի ինքնորոշման իրավունքի մասին է, որը եղել ու մնում է ազգային հարաբերությունների զարգացման ու կատարելագործման ինչպես տեսական, այնպես էլ քաղաքական հիմքը։ Ուստի կարծում ենք, որ հասարակության ազգային կառուցվածքի հետագա ուսումնասիրությունը, որը հրատապ սոցիալ-քաղաքական նշանակություն ունի, պետք է տարվի այդ հիմքի վրա։

Ինչ վերաբերում է ապրելակերպին, ապա այս հարցում հեղինակի վերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրակացությանը։ Պատմական անցյալում էկոնոմիկան կոչված է եղել ստեղծելու պատշաճ ապրելակերպի նյութական հիմքերը, իսկ քաղաքականությունը՝ գործնականում ապահովելու նշված խնդրի լուծումը։ Տվյալ փուլում նոր ապրելակերպին բնորոշ է դառնում մարդկային գործոնի աննախապայման ակտիվացումը, մի բան, որը անտեսված է եղել տասնամյակների վարչահրամայական գործելակերպի ոչ բնականոն պայմաններում։ Հասարակության զարգացման ներկա փուլում էկոնոմիկան արդեն հայտնի չափով ստեղծել է պատշաճ ապրելակերպի նյութական հիմքերը և նպատակ ունի բարելավելու առաջնային պահանջմունքների բավարարումը։ Իսկ քաղաքականությունը, շարունակելով ապահովել տնտեսա-

կան հասունացած խնդիրների լուծումը, միաժամանակ պայքար է կազմակերպում տուտշաֆ սոցիալիզմի նորմաներից կատարվող տարաբնույթ շեղումների դեմ։ Իր հերթին մարդկային գործոնի ակտիվացումը հնարավոր է դառնում ապահովել մի շարք էական նախադրյալների ստեղծմամբ, խոսքը տնտեսական հզորության, սոցիալական ուժեղ քաղաքականության և անձնավորության քաղաքական բարձր կուլտուրայի ապահովման մասին է։

Եթե ազգային հարաբերությունների ու սոցիալիստական սոցիալիզմի հետագա կատարելագործումը դիտվում է որպես սոցիալական զարգացման գլխավոր ուղղություն, ապա դեմոկրատիան հանդես է գալիս որպես այդ ուղղության ապահովման հիմնական գործոն, միջոց ու երաշխիք։ Այս ոլորտում էլ կարելի է հետամուտ լինել էկոնոմիկայի ու քաղաքականության փոխհարաբերությանը։ Էկոնոմիկան ստեղծում է դեմոկրատիայի իրականացման նյութական հիմքերը, հետևաբար հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման արագացումը նպաստավոր է դեմոկրատիայի հետագա խորացման տեսանկյունից։ Ինչ վերաբերում է քաղաքականությանը, ապա այն կոչված է դեմոկրատիայի զարգացումը տանելու խորհրդային հասարակության անդամների հասունացած քաղաքական պահանջմունքների բավարարման ուղղությամբ։ Մի բան դառնում է պարզից էլ պարզ. առանց հասարակության հետագա դեմոկրատացման չկա հետագա որակական առաջընթաց հասարակության ամենատարբեր բնագավառներում։ Պատմությունը հաստատում է, որ քաղաքակրթության ուղիով այն երկրներն են որակական թռիչք ապահովում, որոնք ապավինում են կառավարման դեմոկրատական սկզբունքներին և կամք են դրսևորում չշեղվելու այդ ուղուց։ Անհրաժեշտ է այդ ամենի ոչ միայն ընդհանուր տեսական դիտակցումը, այլև գործնական-քաղաքական կիրառումը։ Ինչպես նշվում է մենագրության մեջ, ոչ միայն էկոնոմիկան և քաղաքականությունն են ազդում դեմոկրատիայի զարգացման վրա, այլև ինքը դեմոկրատիան է հզոր ու մշտական ազդակ էկոնոմիկայի և քաղաքականության առաջընթացի ապահովման համար։

Իհարկե, քաղաքականության և էկոնոմիկայի հարաբերակցության թեման տարբերունակ է։ Ուստի ներկա աշխատանքը չէր կարող ընդգրկել բոլոր հարցերն ու խնդիրները։ Այս նմաստով, օրինակ, միանգամայն ցանկալի կլիներ քննել ոչ միայն սոցիալական հիմնական ոլորտի պրոբլեմները, այլև ինքնուրույն հետաքրքրություն ներկայացնող տեխնիկական ու մշակութային քաղաքականության հարցերը, ավելի մեծ տեղ հատկացնելով սոցիալական զարգացման մարդկային գործոնին։ Ճիշտ կլիներ, որպեսզի լուսաբանվեր նաև էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության միջազգային ասպեկտը, նրա առանձնահատկությունը կապիտալիստական հասարակարգում և այլն։ Բայց այդ բացթողումները որակ չեն կազմում, որովհետև հեղինակի նպատակն է գլխավորապես վերհանել ուսումնասիրվող հարցի տեսական-մեթոդաբանական և գործնական խնդիրները սոցիալիզմի ներկա փուլում և ոչ թե ընդգրկել բոլոր հարցերը։ Նշված հարցերը, իհարկե, բացում են հետագա ուսումնասիրության ուղիները։

Հաշվի առնելով թեմայի հրատապությունն ու կատարման անհրաժեշտ որակը. Շ. Մարտիրոսյանի մենագրությունը կարելի է դասել դեմոկրատական վերակառուցման տեսական ու գործնական հարցին նվիրված նորագույն մենագրությունների շարքը, որոնց գլխավոր առանձնահատկությունը սխոլաստիկայից հրաժարումն է, տեսական ճիշտ հիմքի վրա հասունացած խնդիրների լուծման ուղիների մատնանշումը։ Մենագրությունը անպայման օգտակար է նաև պատմական մատերիալիզմի առարկայի համապատասխան բաժինների դասավանդման ընթացքում, բաժիններ, որոնք շոշափում են սոցիալիստական հասարակության արդի պրոբլեմները։

Է. Ա. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու